

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր

2016

Մաթեմատիկա, 4-րդ դասարան

Չորրորդ տարբերակ

1-10-րդ առաջադրանքներում նշի՛ր ճիշտ պատասխանը:

1. Քանի՞ բնական թիվ կա 21-ի և 34 թվերի միջև:

1) 10

2) 11

3) 12

4) 13

5) 14

2. Տրվածներից ընտրի՛ր այն թվանշանը, որը տեղադրելով
աստղանիշի փոխարեն՝ կստանաս ճիշտ անհավասարություն.

$587 < 5 * 7$

1) 6

2) 4

3) 5

4) 9

5) 0:

3. Գտիր 4718 թիվը 100-ի բաժանելիս ստացված մնացորդը:

1) 1

2) 18

3) 7

4) 718

5) 4000:

4. Եթե Լևոնի, Հրաչի, Ռուբենի տարիքները գումարենք կստանանք 32: Որքա՞ն կլինի նրանց տարիքների գումարը 3 տարի հետո:

1) 35

2) 39

3) 38

4) 41

5) 44

5. Նշված կոտորակներից քանի՞սն են անկանոն՝

$\frac{1}{2}$, $\frac{3}{4}$, $\frac{5}{5}$, $\frac{9}{10}$, $\frac{13}{8}$

1) 1

2) 2

3) 3

4) 4

5) 5:

6. Քանի՞ կիլոգրամ է 2 տ7ց 40 կգ-ը:

1) 27004

2) 2740

3) 7042

4) 7240

5) 7420:

7. Ընդգծի՛ր այն տողը, որտեղ բոլոր թվերը գույգ են:

1) 350, 3566, 3670, 3598

2) 4334, 4372, 4351, 8997

3) 1889, 2889, 3889, 4889

4) 7653, 7645, 3746, 9282

5) 7892, 7890, 7892, 7909:

8. Գիրքն ունի 420 էջ: Գայանեն կարդաց գրքի $\frac{3}{4}$ մասը: Քանի՞ էջ կարդաց Գայանեն:

1) 105

2) 315

3) 560

4) 140

5) 120

9. Որքանն է 311 և 235 թվերի գումարը մեծ 311-ից.

1) 311

2) 235

3) 546

4) 76

5) 312

10. Գտի՛ր այն բոլոր երկնիշ թվերի քանակը, որոնց միավորը 4 է:

1) 8

2) 9

3) 10

4) 11

5) 12

11-15 առաջադրանքների ճիշտ պատասխանները գրի՛ր յուրաքանչյուր աշխատանքից հետո նշված տեղում՝ կետերի փոխարեն:

11.Թվային հաջորդականությունը կազմված է հետևյալ կանոնով. առաջին անդամը 20 է, երկրորդ անդամից սկսած յուրաքանչյուր անդամը հավասար է իր նախորդի կրկնապատիկից հանած 10: Գրի՛ր այդ հաջորդականության հինգերորդ անդամը:

Պատասխան՝ 170:

12.Առանց մնացորդի և՛ 2-ի, և՛ 3-ի բաժանվող ամենափոքր թվին գումարեցին առանց մնացորդի և՛ 2-ի, և՛ 3-ի, և՛ 4-ի բաժանվող ամենափոքր թիվը: Ի՞նչ թիվ ստացվեց:

Պատասխան՝ 18:

13.

$200 + 110 - 75 : 5 = 207$ արտահայտության մեջ փակագծեր այնպես դի՛ր, որ ստացվի ճիշտ հավասարություն:

Պատասխան՝ $200 + (110 - 75) : 5 = 207$:

14. Ի՞նչ թվանշանով վերջացող թիվ պետք է գումարել 743-ին, որպեսզի ստացած գումարը լինի 10-ի բազմապատիկ:


Պատասխան՝ 7:

15. Քառակուսաձև հողամասի երեք կողմերը ցանկապատված են և այդ ցանկապատի երկարությունը 24 մ է: Գտիր այդ հողամասի մակերեսը:

Պատասխան՝ 64մ^2 :

16-17-րդ առաջադրանքների լուծման ամբողջ ընթացքը մանրամասն և հիմնավորված ներկայացրո՛ւ առաջադրանքներից հետո նշված տեղում:

16. Երկու հաջորդական բնական թվերի գումարը 1421 է: Գտեք այդ երկու թվերից փոքրը:



Միասին 1421:

Գտնել այդ երկու թվերից փոքրը:

Լուծում

$$1421 - 1 = 1420$$

$$1420 : 2 = 710$$

Պատասխան՝ 710:

17.Քառակուսու պարագիծը 88սմ է: Գտիր այն քառակուսու մակերեսը, որի կողմի երկարությունը 2սմ-ով փոքր է տրված քառակուսու կողմի երկարությունից:

Քառակուսու P=88սմ

?-քառակուսու S, որի կողմի երկարությունը 2 սմ-ով փոքր է տրված քառակուսու կողմի երկարությունից:

Լուծում

$$88 : 4 = 22 \text{ սմ}$$

$$22 - 2 = 20 \text{ սմ}$$

$$20 \times 20 = 400 \text{ սմ}^2$$

Պատասխան՝ 400սմ²:

